

7442
7443
7444
7445
7446
7447

891.99
U-66

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼԱՏԵԱՆԻ

891.99

114

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

u u q b s

(Պատմւածք)



ԹԻԳԻՒՄ
Տպարան Մովսես Վարդանեանցի
1903

3861

СИРИЯ У

З Д Р У Й

Дозволено Цензурою. 13 Октября 1903 г. Тифлисъ.

(без номера)

2608-57

СИРИЯ
Археологическое издание А. Вандала
1908

0. II. 9. 6. 8

ՆՈՒԻՐ ՀԻՒԲԱ-ԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

U U Q b S

I

...«Մի անգամ մի զօրեղ ասպետ—պատմում է միջնադարեան մի վէպ—սիրեց մի իշխանուհու: Թողեց հայր ու մայր, թողեց տուն ու տեղ, հեծաւ իր նժոյգ, առաւ իր նիզակ և եկաւ կանգնեց իր իդէալի ամրոցի տակ»:

«Բայց—ասում է վէպը—աղջիկը քարասիրտ
էր. ամրոցի մօտ գիշեր-ցերէկ կանզնած ասպե-
տին թողեց անուշաղիր և չըխղճաց անդամ։ Ա-
սենք, ասպետը գութ չէր որ ուզում էր, այլ մի-
միայն սէր։ Նիզակը ցցեց ժայռի մէջ, ձին կա-
պեց հսկայ կաղնուն և յամառութեամբ սպասեց
ամիսներ ու տարիներ...

«Աղջիկը նրան շլ սիրեց. Նա սիրտ չունէր,
ոչ ոքի չէր սիրում. ամէնքին յուսահատցընել էր
և ետ դարձրել. ամենքին մեռժել էր և սրտերը
լօշոտել:

«Ասպետը լուր ու յամառ՝ մնաց ամրոցի
տակ։ Զիւնն ու քամին, արևն ու խորշակը նրան

անդրդւելի գտան. սպառնալիք ու անօթութիւն
նրան չընկնեցին ..

«Եւ նա նւիրեց։ Սիրեց, սիրեց... Ու մե-
ռաւ։

«Ու երբ մեռնում էր, խնդրեց Աստծուց մի-
միայն մի բան. այնպէս անել, որ դիակն իսկ
լիդէալից անբաժան մնար։

«Եւ Աստւած լսեց նրան. քարացրեց դիակն
ու ձին, ասպարն ու նիզակը՝ ամրոցի կողքին։
Այսպէս, ասպետը սիրեց և քարացած՝ յա-
ւիտեան մնաց իր իդէալի մօտ։

«Սիրեց, սիրեց... ու քարացաւ...»։

Կարդաց օրիորդը, լսեց ու մտախոհ՝ աշքը
գրքից շրջ հեռացրեց։

— Վերջացաւ. հարցըին մի քանի ձայներ։
— Այո, վերջացաւ. պատասխանեց ուսուցիչը,
և նայեց ամէնքին։

Մի ըոպէ ոչ ոք չըխօսեց։

Այդ պատահում էր Կովկասի շքեղ ամառա-
նոցներից մէկում, մի հարուստի տան սրահի
մէջ, ուր հաւաքւել էին տանուաէրը, տանտիկի-
նը, նրանց հարար, երկու աղջիկները և իրանց
ծանօթ մի ուսուցիչ, որ մի քանի օրով հիւր էր
եկել։

Տանտէրը հասակաւը մարդ էր, կնճռալից,
բայց աշխոյժ դէմքով. տանտիկինը նոյնպէս հա-

սակաւոր էր ու ծանր, ազնիւ գեղեցկութեամբ
կին։ Բայց նրա աշքերը փակւում էին և նա հա-
զիւ լսում էր։ Կարդացողը մեծ աղջիկն էր։ Հե-
տաքրքրութեամբ լսում էին միայն տանուաէրը,
հարսը և փոքը աղջիկը։

Հինգ օր էր որ ուսուցիչը հիւր էր։ Ճաշը,
որ վերջանում էր հազիւ ժամը 4-ին, տեղի էր
ունենում պատշգամում, յետոյ նրանք հաւաք-
ւում էին մեծ սրահը և քանի ուսուցիչը այնտեղ
էր, տանտէրը կամ հարսը խնդրում էին նրան
մի բան ընտրել կարդալու այս կամ այն գրքից
և մինչև թէյի ժամանակ, նրանք խօսում էին
կարդացածի մասին և օգտում ուսուցչի բա-
ցատրութիւններից։

Տանտէրը ամենից աւելի հետաքրքիր, ամե-
նից աւելի ուսումնասէրն էր երեսում. կարծես
մի գանձ էր ձեռք ձգել և անդատար հարցեր
էր տեղում ուսուցչի վրայ։ Գիտենալ էր ուզում.
ցանկանում էր ծերութեան ժամանակ գոնէ ճա-
շակել գիտութիւնից այն բոլորը, ինչ որ երի-
տատարդ հասակում, առետրական գործերի մէջ
ընկած լինելով, չէր կարողացել անել։

Հարսը—տանտիրոջ կրտսեր եղբօր կինը,
ուսել էր մի ժամանակ. և այժմ, չը նայելով որ
մի քանի որդոց տէր էր, զեռ շարունակում էր
կարդալ. մի լաւ խօսակից էր. կեանքի դառն
փորձառութիւնը նրան դարձրել էր զգուշաւոր։

լուակեաց, բայց հասկացող։ Զարգացած էր և կեսնքը նրան աւելի էր զարգացնում։ Նա էլ հետաքրքրող էր և սիրում էր զարգացած մարդկանց հետ խօսել, կարծիքներ փոխանակել։

Մնում էին երկու օրիորդները։ Երկուսն էլ միջնակարգ դպրոցի աշակերտուհիներ էին. մէկը կիսատ էր թողել և այժմ մասնաւոր դասեր էր առնում, իսկ միւսը դեռ շարունակում էր դպրոց հաճախել։

Տանտիկինը միշտ ննջում էր. մի քիչ լսում և ապա աշքերը փակում էին, գլուխը խոնարհում և մի քանի ըոպէի քնի մէջ, յաճախ երազներ էր տեսնում։

—Բայց ինչ է ուզում ասել այդ զըռյցը. խօսեց վերջապէս տանուտէրը—ես չը հասկացայ... թէն շատ լաւ զըռյց էր։
—Իսկ դուք, տիկին, դարձաւ ուսուցիչը հարսին։

Տիկինը կարմրեց և վարանելով՝ ասաց.

—Ե՞ն... թւում է թէ հասկացայ. բայց էլի մութ կողմեր են մոււմ ինձ համար։ Միայն մի բան ըմբռնում եմ, որ ասպետը սիրեց, սիրեց և յամառութեամբ մեռաւ, չը բաժանւելով իր սիրածից։

—Սիրեց, սիրեց և քարացաւ... ասաց օրիորդը՝ մտախոհ։

—«Քարացաւ» բառը այստեղ չը պէտք է

հասկանալ, որ նա անզդայ դարձաւ. խօսեց նորից հարսը — այլ որ նա քարի պէս հաստատուն մնաց և միշտ իր սիրածի մօտ։

—Այդ ճիշտ է. ասաց ուսուցիչը — ինձ էլ թւում է թէ այդպէս պէտք է հասկանալ։

—Վաեմ սէր. գոչեց տանուտէրը հիացած։

—Միայն միջնադարեան ասպետները ընդունակ էին այդպէս սիրելու. ասաց մեղմ ձայնով հարսը — այժմ այդպիսի սէր չը կայ։

— Սօնան իրաւունք ունի. պնդեց տանուտէրը — այժմ այդպիսի սէր չըկայ. մեր որ երիտասարդը — աւելացը նա ծիծաղելով — լուռ ու խոնարհ կը մնայ ամբոցի տակ, ձիւնի և քամու, արեի և խորշակի մէջ անդրդւելի, յամառ և տոկուն... Դրա կէսն իսկ ընդունակ չէ անելու որևէ երիտասարդ։

—Եւ եթէ անել սկսի, խօսեց նրա մեծ աղջիկը — կը ծիծաղեն. կասեն՝ կիզդում է. սանտիմինտալ, ՚Իօն — քիշոտ կը կոչեն։

Ուսուցիչը միշտ ժպիտը դէմքին՝ լուռ նայում էր խօսողներին և սպասում, որ ամեն ոք իր կարծիքն ասի։ Հարսը — տիկին Սօնան, այդ նկատեց. դարձաւ նրան և հարցրեց.

—Իսկ դուք, պարոն Վահան, դուք ինչ կամէք։

—Ինչի մասին, տիկին։

— Զրոյցի։ Դուք էլ այդպէս էք հասկացել։

Ուսուցիչը՝ լրջացաւ։ Ամենքը նըան նայել
սկսեցին։

—Ո՞չ. ասաց նա ծանր շեշտով — ևս այդպէս
չեմ հասկանում։ Զրոյցը մի այլաբանութիւն է։
Ինչու մտածել որ նրա զրոյցը ի նկատի է ունե-
ցել միմիայն սէրը դէպի կանայք։ Եւ իսկապէս,
ինչպէս մտածում է ձեր տագըը, միթէ մեզնից
ո և է մէկը ընդունակ է մի աղջկայ սէրը զրա-
ւելու համար՝ մնալ ամրոցի տակ ձիւնին։ Քա-
մու, արեի և խորշակի մէջ անտրտունջ։ Կ յե-
տոյ, անձնանւիրութիւնը այնքան առաջ տաճել,
որ չըկամնար դիակն իսկ հեռացնել աղջկա-
նից… Ո՞չ. ևս զրոյցի միտքը այդպէս չեմ հաս-
կանում։ Ցիշեցէք այն խօսքերը, թէ «թողեց հայր
ու մայր, թողեց տուն ու տեղ, հեծաւ իր նժոյգ
և եկաւ կանզնեց իր իդէալի ամրոցի տակ»։ Իր
իդէալի, որին նա սիրեց և ժայռաշած՝ չըհեռա-
ցաւ նոանից… Իդէալը աղջին է, սեռական
այդպիսի սէրը։ Սրժէ արդեօք այդքան յամա-
ռութեամբ նւիրւել մի եսամոլ, լոկ իրան գոհա-
ցում տւող նպատակի… Թողնենք խնդրեմ այդ-
պէս սէրը, ուր աղջիկը սիրում է «հերոսութիւն-
ներ» ունենալ տղայից և զրա համար էլ տղան
ձեանում է կեղծ հերոս, կեղծ ասպետ, քանի
զեռ աղջկան ձեռք չի ձգել։ Ուր ո՞չ մի կողմից
չըկայ անկեղծ ասպետական ողի, այլ միմիայն
կեղծ մեծախօսութիւններ և ստութիւններ…»

Տանուտէրը բարձրաձայն քրքջաց։
—Այ, լաւ է ասում վարժապետը. շատ ճիշտ
է ասում. գոշեց նա։

Տանտիկինը վեր թռաւ վախեցած և հարց-
րեց թէ ինչ էր եղել։

—Ոչինչ, ոչինչ, ծիծաղեց տանտիրը — Դէ
այ կնիկ, ուզում ես քնել, զնա քնիր էլի՛ … ինչ
ես նստել ու մեզ երկրպագութիւններ անում
միշտ։ Երսի երազ էլ տեսած կը լինես։

—Հա, տեսայ։ Ժպտաց տանտիկինը ամա-
չելով — բայց էլ չեմ քնիր, խօսեցէք։

Ու նորից աշքերը փակւեցին։

—Այն. շարունակեց ուսուցիչը — զրոյցի միտ-
քը այդ սէրը չէ։ Նա աւելի բարձր բան է ա-
սում։ Նա ակնարկում է այն անյողողող ասպե-
տին, որ դիմանալով ցրտի, տաքի, անօթու-
թեան ու հալածանքի, կռւում է վատ հանգա-
մանքների դէմ, չէ ընկնում, չէ յուսահատում
և իդէալին է ծառայում մինչև վերջին շունչը…
Զրոյցը մի իդէալիստի պատմութիւն է անում։

Բոլորը լուռ և կէս զարմացած՝ լսում էին
երիտասարդին, որ զրէթէ թաղւած բազկաթո-
ռի մէջ՝ զլուխն էր միայն երևցնում և բոցա-
փայլ աշքերը սեռում լսողների վրայ։

Տիկին Սօնան հետաքրքրութեամբ դիտում
էր նրան, իսկ աշակերտուհին — մեծ աղջիկը, մի
տեսակ պատկառանքով և լարւած ուշադրու-

թեամբ՝ աշխատում էր ոչ մի բառ չը փախցնել խօսածներից:

Ահա այդպիսի դրութեան էր հասել խօսակցութիւնը, երբ սրահի դուռը ուժգնութեամբ բացւեց և դռան շէմքի վրայ յայտնւեց միջահասակ մի մարդ, շատ ճաշակով հազնւած, ժպիտն երեսին, ձեռքերը տլորելով:

— Բարեւ. ասաց նա և գլխարկը դրեց սեղանի վրայ—երեխ դարձեալ փիլիսոփայութիւնով էք զբաղւած, համ: Ես ձեզ չեմ խանգարիլ և մի քիչ կը լսեմ. . Խրիստափորը —բանը շեկան, Սօնա. դարձաւ նա կնոջը:

— Զեն եկել. ասաց տիկին Սօնան—որտեղ էիր դու:

— Մերգէյի մօտ. զօռով ճաշի պահեց. Իիմա ուր որ են՝ կը գան... Մենք ձեզ շենք խանգարիլ. դուք վիճեցէք, իսկ մենք պատշպամում մի քիչ կը խաղանք:

Ալա ոտքի ելաւ, դուռը կիսովին բաց առաւ և ձայնեց դէպի դուրս՝ աղախնին.

— Մարիա, ա Մարիա... խաղասեղանը գուրսը դիբ... Գիտեմ, Սօնա—դարձաւ նա իր կնոջ —այդ Խրիստափօրը ինձ դաղից երէկ. հարիւր բութիս տարաւ: Ի՞նչ մարդ եմ, եթէ այսօր այդ փողը չը հանեմ նրանից... Բայց ախ, մոռացայ որ ձեզ խանգարում եմ—դարձաւ նա բոլորին—

Ներկցէք խնդրեմ և շարունակեցէք. մինչեւ տղերանց գալը ես էլ կը լսեմ:

— Իսկ ես կերթամ քիչ կը քնիմ. ասաց տանտէրը ոտքի ելնելով: Ապա կնոջը դարձաւ և աւելացրեց.

— Գնանք, այ կնիկ. գնանք. աշքերդ բաց անել չես կարողանում:

Յետոյ երկուսն էլ դուրս ելան:

— Ինչի՞ մասին էիք խօսում. հարցրեց տիկին Սօնայի ամուսինը անհողութեամբ կէս պառկելով օթոցի վրայ:

Տիկինը դէմքը քիչ կնճռեց, կարմրեց, յետոյ ճիղ գործելով իր վրայ, բռնազրօսիկ ժպիտով ասաց.

— Վարդուհին մի պատմութիւն կարդաց և դրա մասին էր:

— Պատմութիւն... հետաքրքիր է. ինչ պատմութիւն:

Տիկինը համառօտակի պատմեց զըյցը: Ամուսինը լսեց ժպտալով և երբ վերջացրել էր, ասաց.

— Հըմ. այդ է բոլորը: Այդ ասպետը երեխ խենթ է եղել, զըյցի գըողն էլ խելքը պակաս: Մարդ էլ ցըտին ու քաղցին դիմանալով անտըրտունջ կանգնած մնայ և մեռնի՝ թէ ինչ է, մի աղջիկ է սիրում... էլ ինչ սէր, երբ մարդ մըրսում է կամ սոված է... չը, պարզն վարժա-

ալեւո—դարձաւ նա ուսուցչին—դու փիլիսոփայ
ես, դու աւելի լաւ կը հասկանաւ
եւ այդ բոլորը նա խօսեց այնպիսի կէս
հեգնական ու անհոգ կերպով, որ ուսուցիչը վի-
րաւուրած՝ մի ըռպէտ ակնարկը դարձրեց և դէմ-
քը կնճռած մնաց, չինդ օր էր միայն որ ծա-
նօթ էր այդ մարդու հետ և արդէն դուզում էր
և մինչև իսկ հեգնուում:

Բայց յանկարծ նա շարժւեց, աչքերը սեե-
ուց հեգնողի վրայ և կծու ձայնով պատասխա-
նեց.

—Եթէ դուք, պարմ, նստած էք ձեր խա-
ղասեղանի առաջ, որի համար էք միայն ապ-
րում, և ձեր հակառակորդը ձեր քսակը դատար-
կում է, դուք ինչ էք անում. ընկճում էք, թէ
աւելի կատաղաբար շարունակում, մոռանալով
կին, որդի, մարդավարութիւն կամ մարդկու-
թիւն...

—Ա՛, այդ ուրիշ բան—ծիծաղեց պարոնը,
իրը թէ չըհասկանալով ուսուցչի կծու խօսքերի
միտքը—այդ ուրիշ բան. ես փիլիսոփայ չեմ և
ոչ էլ ուսուցիչ. կը նստեմ և կ'աշխատեմ փողս
ետ առնել. այդ ուրիշ բան, այտեղ փողի բան
է, հանաք բան չի: Ես չեմ հանգստանայ, մինչև
որ հակառակորդիս չը յաղթեմ. Այ, Խրիստա-
Փորը ինձ այնպէտ դադեց, որ եթէ էլի տասը ըս-
տում չերեաց, կառք կը նստեմ և կերթամ իր

դիւզից քաշ կը տամ—կը բերեմ:

—Ենչ որ դուք անում էք խաղի համար,
ասաց ուսուցիչը շեշտելով—կան մարդիկ, որ
անում են աղջկայ, իդէալի համար:

—Հըմ... համաձայն եմ. աղջկայ համար կա-
րելի է. բայց ես չէի անիլ. փողի բան չէ. փող
որ ունենաս, ոչ մի աղջիկ չի դիմանալ...

—Կարապետ... ձայնեց տիկին Սօնան յան-
դիմանական կերպով և յետոյ կարմրած՝ ուսուց-
չին նայեց:

—Ես ու իմ Աստւածը՝ որ ճիշտ եմ ասում.
շարունակեց Կարապետը ցինիկաբար ծիծաղե-
լով—փողի բան է. աղջկայ համար՝ փողը:

—Իսկ եթէ մէկին սիրում ես, որ փողի կա-
րուտ չէ... գոչեց Վարդուհին—և որի զգացմունք-
ները փողով գնել չէ կարելի...

—Դու էլ փիլիսոփայ ես դարձել, Վարդու-
հի. ծաղրեց Կարապետը—վարակւել ես ուսուց-
չիցդ: Բայց դու կեանքը զեռ չես ճանաշում. ա-

պա մէկ հարուստ ու հազարներ ունեցող երի-
տասարդ եղիք և տեսնենք ո՞ր աղջիկը քեզ կը
մերժի, ո՞վ աղջիկ չի տալ քեզ: Փողի առաջ ո-
չինչ չի դիմանալ, օրիորդ: Որ փող տային այդ
զըոյց զրողին՝ ուրիշ երգ կ'երգէր... Ես գուցէ
անախորժ բաներ եմ ասում—դարձաւ նա իր
կնոջ և ուսուցչին—բայց կեանքից եմ խօսում.
Իսկ դուք ինչ որ միշտ երկնքից էք մոչում:

Իդէալ, զգացմունք... չը զիտես ինչ... Դա-
տարկ խօսքեր են դրանք. մի քիչ կեանքի մար-
դիկ եղէք... Ապա, Մարիա. (ասաց նա ներս
մտնող աղախնին) Դինի ես բերել. լաւ, 22/
խցանը հանիր, պտուղ էլ կայ... լաւ... դէհ,
պարոն վարժապետ, համեցէք... Սօնա, հոգիս,
ինչ ես դէմքդ երկարացըել. առածներս քեզ
դուք չեկան. ոչինչ, խմիթ, քէփդ կը բացւի...

Յետոյ ոստնեց օթոցից ցած, լցըեց "մի
բաժակ զինի, ժպտալով նայեց բոլորին ու մի
ումապի զատարկեց։ Տիկին Սօնան մի արհամար-
հոտ շարժում դործեց և վշտացած դէմքով՝ ոտ-
քի ելաւ։

— չը՞մ. շարունակեց Կարապետը նորից
պառկելով օթոցում—տեսնում եմ որ դուք թըռ-
նում էիք՝ ես ձեզ ցած բերի... Ներողութիւն.
Եթէ ձեզ ախորժելի է միշտ ժռչել, կեանքից
դուքս՝ երազել համեցէք, ես ձեզ չեմ խանգա-
րիլ. Ես կը լսեմ միայն։ Իմացէք սակայն, որ
վերջ ի վերջոյ բոլորդ էլ ցած էք ընկնելու...
Իդէալը ոչ տաք սենեակ է տալիս, ոչ փող և ոչ
էլ սիրած աղջիկը...

— Խնդրեմ լովր. զոչեց տիկին Սօնան սաս-
տիկ նեղացած:

— Լաւ, լաւ, ես կը լոեմ, դուք խօսեցէք...
Հա, ինչ էիր ասում, պ. վարժապետ, ասում էիր
որ կան զղացմունքներ, որոնց փողով չէ կարե-

լի գնել... Վարդուհին էր ասում կարծեմ... որ
կան իդէաներ, որոնց համար պէտք է անօթի
մնալ, մըսել, մեռնել... Եւ որ այդ յիմար աս-
պետը, գժի պէս ցցւած մնալով ամրոցի դռան
առաջ ու քարանալով՝ մի իդէալական հերոս
է... Հըմ, հըմ... հերոս... խօսք չունիմ... Բայց,
շարունակէք. ես կը լռեմ այլ ես:

Ապա մի քըքիջ արձակեց, աջ ձեռքը բեր
նին դրեց, աւելի հանգիստ ոտնելը պարզեց և
հեղնօրէն՝ սպասեց:

Մի ըոպէ լռութիւն տիրեց։
Ուսուցիչը, որ արհամարհու սառնութեամբ
նրան էր նայում, լռութիւնը խզեց. ուսերը
թոթւեց և դառնալով տիկնոջ ու օրիորդին
ասաց։

—Ես շարունակում եմ... և կը կնում, որ
զըսյցի ակնարկը սեռական սէրը չէ. Նա ակ-
նարկում է այն հերոսին, որ տմէն նեղութիւն
յանձն առնելով՝ կը քարանայ իր իդէալի մէջ և
նրան կը զոհւի տռանց տրտունջի. Նա ակնար-
կում է առաջադիմութեան, գիտութեան այն հե-
րոսներին, որոնք զոհել են տուն ու տեղ, մին-
չև վերջին շունչը գործել են, յաճախ անօթի
մնացել, հալածւել և մնոել յանուն իրանց նպա-
տակի: Մարդիկ նրանց «խենթ» են անւանել,
ցնորւած, վատասերւած համարել. և սակայն
այդ իսկ խենթերն ու «ցնորւածներն» են, ո-

ըոնց դիակների վրայ ևն ամբացել մեր այժմեան համեմատական լաւ կեանքի միջոցները Ամէն զաղափար զոհ է պահանջում. և, ինչպէս ասում է Նիցշն՝ «ինչ փոյթ իմ անձը — այդպէս դէւիզ պիտի ունենայ զրած իր դռան վրայ ապագայի մարդը»...

— Մի խենթն էլ այդ մարդն է, ով այդպէս
է ասել. ծիծաղեց Կարապետը: Յետոյ, երբ նկա-
տեց կնոջ բարկացայտ հայեցքը, վրայ տւաւ.

—Ա՛խ, ներողութիւն, մոռացայ որ իրաւունք չունիմ լսենթ անւանելու ձեր խելօքներին... զարունակեցէք, ես աւելի լաւ է դուքս կերթամ... երկի այժմ Խըլիստափօրն էլ կը գայ...

Ասաց, ժպիտը դէմքին՝ ելաւ, վառեց հանդած սիզարը, ծաղրօրէն բարեեց և դուրս կնաց:

Զով, լուսընկայ գիշեր էր:

Պատշգամից ցած — դէպի խորութիւնը սփռւող թանձը անտառի մէջ՝ անշշուկ լուռ-թիւնը կատարեալ էր։ Հեռուն միայն, հա-ջում էին մի քանի շներ և լսում էին ա-մառանոց եկողների երգերը։ Դրացի հարուստի բաց լուսամուտից մէկ մէկ դուրս էր ժայթ-քում դաշնամուրի անճոռնի հնչիւն և ապա մի շան ոռնոց, որ շղթայից կապւած՝ գան-գատւում էր կապի և ականջ հարստահարող ձայ-ների դէմ։

Եւ այդ բոլորի մէջ՝ յանկարծ լաւում էին
խաղասեղանի առաջ նստող խաղամոլների կան-
չերը:

— Հինգ մանէթ ունիս, Կարապետ, գոռում
էք Խըլիստավորը:

— Աղա, բաս էղքան էլ մեռանք. աւելի բար-

ձըր աղաղակում էր Կարապետը—կուզես՝ տասն
արի. թուղթ ուզիր դու, թուղթ...

Բանկը Կարապետի մօտն էր և եռապատկ-
ւած։ Թղթադրամի կոյտը ձախ թեռվ պաշտ-
պանել, աջովը՝ ուզողին թուղթ էր տալիս։

Խաղացողները չորս էին. նրանց լուսաւո-
րում էր օճորքից իջնող մի մեծ լապտեր։

—Զէ, հինգ եմ գալիս. ասաց Խրիստաֆօ-
րը—դէհ, թուղթ բաց արա։

Կարապետը ձգեց մի խաղաթուղթ։

—Տաս մանէթս տուր, շուտ. բացագանչեց
Խրիստաֆօրը ուրախութեամբ—էս քեզ քուզնու
ասը։

—Ըստ ես քո... կրծտեց ատամները Կարա-
պետը—էլի՛ սկսեցիր դաղել ինձ։ Քսանի հետ
ինչպէս ես։

—Զէ, ախպէր, էղքանի զօռ չունեմ ես։

—Վախկոտ ես էէ, վախկնա... զոմարդու-
թիւն չունիս։

—Ես գալիս եմ քսանը. մէջ մտաւ երլորդ
խաղացողը։

—Դու, ծիծաղեց Կարապետը ուժգնու-
թեամբ դառնալով դէպի խօսողը։

—Դեռ թուղթ տուր, տես ինչպէս բանկդ
ցըիւ տամ. թուղթ տուր։

—Մէկ սրան նայէք է. քրքչաց Կարապետը

—բանկս ցըիւ կը տաս... Ահա քեզ թուղթ։
Եւ ուժգնութեամբ սեղանի վրայ խփեց մի
խաղաթուղթ։ Ինժինէր խաղացողը նայեց իր
թղթին, դէմքը կնճուց և լուրթեամբ հանելով
տասանցներ՝ դրաւ Կարապետի առաջ։

—Բտէնց հան... գոչեց վերջինս—էդ քեզ
խրատ... բանկը ցըիւ տուղիս նայէք մէկ..

Այսպէս տաքացած՝ խաղում էին նրանք։
Տիկին Սօնան վորձեց մի քանի անգամ խընդ-
րել նրանց խաղը վերջացնելու, առարկելով որ
լաւ գիշեր էր և հարկաւոր էր դաշտ գնալ
զբունելու... Բայց ով էր լսողը. ամենքը ովկոր-
ւել էին թղթախաղով։

—Է՞ն. արեց տիկինը յուսահատաբար—խօ-
ամառանոց չենք եկել. կարծես խաղատուն լի-
նի. ամեն երեկոյ հոգիներս հանում էք ձեր խա-
ղովը։

—Դէ լաւ, լաւ, Սօնա ջան. գոչում էր նրան
Կարապետը—արի նստիր դու էլ. բանկը քեզ կը
տամ. լաւ վող կայ հա...։

Սըրահում ուսուցիչն ու օրիորդները թէյ էին
խմել և վճռել էին զբօսնելու դուրս գնալ։ Տան-
տէրն ու տանտիկինը չէին կամենում մասնակ-
ցել զբօսանքին և երբ տիկին Սօնան մի քանի
անգամ վորձելուց յետոյ ամուսնուն էլ տանել
տեսաւ որ ի զուր էր, սրահ մտաւ և ասաց
ուսուցչին։

— Մենք գնանք, պլ. Վահան. ի զուր է. ոչ
ամուսինու է ուզում խաղը թողնել և ոչ էլ միւս-
ները. մենք գնանք:

Երկու օրիորդներն առին ծածկոցները և
առաջ ընկան, իսկ տիկին Սօնան և ուսուցիչը
նրանց ետևից՝ փողոց ելան:

— Դէպի բլուրը, չէ. դարձաւ Վարդուհին՝
միւսներին:

— Դէպի բլուրը. պնդեց տիկին Սօնան—
այնտեղ միշտ լաւ է. կը նստենք դալար խոտե-
րի վրայ և աղմուկներից հեռու՝ քիչ մաքուր օդ
կը վայելենք:

Ուսուցիչը լուսութեամբ քայլում էր տիկնոջ
կողքից, յենած իր ձեռնափայտի վրայ: Տիկինը
դեռ բարկացած՝ երբեմն ետ էր նայում դէպի
տուն և երբ բաւական քայլել էին, ասաց.

— Ճշմարիտ, աւելի լաւ էր ամառանոց չը
գալ. միշտ աղմուկ, միշտ հիւր, առաւտոֆից մին-
չև երեկոյ ուտել, խմել, խաղալ և ոչ մի պտոյտ
չ'անել... ի՞նչ կեանք է այս:

— Դուք երբէք չէք խաղում. դարձաւ նա
յանկարծ ուսուցին:

— Երբէք, տիկին... իսկ դժւը:

— Խաղում եմ: Սովորեցրին ինձ. և երբ
խաղընկերը պակասում է, ես եմ լինում չոր-
սորդը:

— Եւ անշուշտ յաճախ է լինում այդ:

— Այո, յաճախ... Շատ էլ զւարճութիւն չեմ
զգում, բայց այժմ վարժւել եմ:

— Եփսոս, արեց ուսուցիչը — ձեզ էլ փշաց-
րել են:

— Ինչպէս. զարմացաւ տիկինը — միթէ, ձեր
կարծիքով, խաղալ՝ նշանակում է փշանալ..
Շատ խիստ էք դուք:

— Խիստ չեմ. ասաց ուժգնութեամբ ուսու-
ցիչը — ես զեռ մեղմ ասացի. կուզէք՝ աւելի
խիստը կասեմ:

— Խնդրեմ...

Երկու օրիորդները քիչ մօտ եկան. այժմ
չորսը միասին սկսեցին քայլել: Մտել էին մի
ծառուղու մէջ, որի վերջին ծայրումն էր գնա-
լիք բլուրը:

— Ես ոչ մի յատկութիւն չեմ ճանաչում,
խօսեց ուսուցիչը — որ թղթախաղի չափ անբա-
րոյականացնող լինի: Թղթախաղը անբարոյա-
կանութիւն է և բոլոր միւսներից վատթարը:

— Օ՛, ժպտեց տիկինը — դուք ծայրայեղ ար-
տայայտութիւններ շատ էք սիրում. երէկ էլ նոյն
ուժգնութեամբ պնդում էիք, որ համբերութիւնը
ամենազծուծ յատկութիւն է և որ դուք նրա-
նից ստորացնող յատկութիւն չէք ճանաչում:

— Նոյնը և այսօր պնդում եմ, տիկին: Մտա-

ծեցէք քիչ: Եթէ համբերութիւնը լաւ յատկութիւն լինի, ուրեմն ոչխարները և էշերը պիտի լինին ամենաառաքինի արարածները Բայց այդպիսի առաքինութիւնը տանում է դէպի այնպիսի դրութեան, որ եթէ մարդկութիւնն ամբողջ այդպէս առաքինի լինէր, երբէք չէր յառաջդիմիլ և զարգանալ: Համբերութիւնը մահացնող, ապշեցնող և ողորմնլի բոյս զարձնող մի յատկութիւն է, որ հին բարոյախօսների ոչխարային հակումների արդարացնողն է եղել և որ ստըրլային փիլիսոփայութիւնից է ծնունդ ստացել...

—Այլանդակ բարոյախօսութիւններ էք անում. ծիծաղեց տիկինը — այժմ միւսը տեսնենք: Ասում էիք թղթախաղը անբարոյակութիւններից վատթարն է: Փաստեր տւէք:

—Խաղամոլի վիճակը — ինքնին մի՛թէ փաստչէ: Նա կորցնում է իր ժամանակը, բթացնում լաւ հակումները, թմբեցնում ուղեղը, քարացնում սիրտը... Մի խօսքով, նա ընկերութիւնից խլում է մի անձի և ապականում նրան՝ մարդկութեան, ընտանիքի և ընկերների համար: Նա դառնում է մի աւտոմատ, որ մի՛միայն խաղի վրայ է մտածում, կողոպտել երազում, ժամանակը սպանել տենչում... Այդ բոլորը կատարում է նրա մէջ անզգայապէս, բայց կատարում է անխուսափելի կերպով: Խաղամոլը կորած մարդ է. և խաղը՝ մէկից աւելի անձերի մէջ մեռցըել է ա-

մեն լաւ յատկութիւն... Մի խաղաք, տիկին, եթէ չէք ուզում աւելացնել փշացած, ողորմելի անձերի թիւը մէկով ևս...

Տիկին Սօնան մի բարկացած շարժում գործեց և ոչինչ չըխօսեց:

—Այս խօսքերը ձեզ նեղացըն. հարցըց ուսուցիչը:

—Ո՞չ. ասաց տիկինը — միայն դուք տարօրինակ էք դատում. ամէն ինչ գունաւորում էք, չափազանցում, խոշորացնում...

—Ուրիշ խօսքերով՝ ես այլանդակ մտքեր եմ յայտնում:

—Այ՞... Դուք ձեր դատողութիւններով ինձ յիշեցնում էք այդ միջնադարեան ասպետի ծայրայեղ վարմունքը... Դուք սակայն աւելի տեսական, խօսքի մարդ էք թւում ինձ, քան գործի... Չը նեղանաք: Ես նկատում եմ որ դուք էլ մեր այժմեան բոլոր հայ ուսում առած երիտասարդների նման՝ տեսականօրէն իդէկիստ էք, ոգեսորւող, տեսական ասպետ և ուրիշ ոչինչ... Դործնականում կասկածում եմ... այդքան գունաւոր և փրուն խօսողներից միշտ հակառակ գործեր եմ տեսել... Դուք վիրաւորւեցէք... Ներեցէք ինձ...

—Չեմ վիրաւորւում, ո՞չ, տիկին. բայց ցանկալի էք որ աւելի ընդլայնէիք ձեր դատափետութիւնը:

Նրանք հասել էին բլրակին։
Մի հրաշալի բարձրութիւն էր դա, որի
ստորոտից տարածւում էր ծառազարդ մեծ
դաշտը. հօրիզոնի վրայ անտառ ու լեռներ,
մի կողքին, լուսնի լոյսի տակ՝ շողջողուն գե-
տակը, հեռուն, մշուշի մէջ երեցող գետեղը
կրակներ և ապա մի խաղաղ լոռութիւն՝ կա-
նաչ արօտների վրայ, ուր եկան նստելու զբօս-
նողները։

—Յոզնեցի հս. ասաց տիկինը և նստեց։
—Արժէր կառք նստել և գետեզը զնալ.
Դիտել տւաւ Վարդուհին։

Ոչ ոք չը պատասխանեց. Ուսուցիչը տեղ
բռնեց տիկնոջ կողքին և երբ պահ մի լուռ էին
բոլորը, ասաց.

—Ես սպասում եմ, տիկին...

Տիկինը ցնցւեց, քիչ դաշտը դիտեց, թաշ-
կինակով քրտինքը սրբեց, ճակատը զով զեփիւ-
ոին տւաւ և ասաց.

—Գիտեմ, ես էլ խիստ խօսեցի։ Բայց
վաղուց է, որ իմ մէջ կուտակում է մի այն-
պիսի զայրոյթ, որ զոյանում է, երբ տեսնում
եմ անդատար միմիայն խօսքի մարդիկ. Մար-
դիկ, որոնք սքանչելի կերպով խօսում են, դա-
տում այս-այն խնդիրը, մարդիկ, որոնք իդա-
լիստ, անձնազոհ և այլն են միմիայն խօսքերով

և որոնցից ոչ մէկը գործնականում այն չէ, ինչ
որ խօսում է։ Իմ կեանքում տասնեակ համալ-
սարանականների, տասնեակ ուսում առած գրա-
ւիչ, համակրելի երիտասարդների եմ հանդիպել.
որոնք սքանչելապէս ոգեսրութեամբ խօսել են
բարձր մտքերի մասին, իդէալի համար շքեղ
խօսքեր են որոնել իրանց հիացումը և խանդը
արտայայտելու, որոնք թշւառների գրութեան
մասին խօսելիս՝ յուզւել են, իրանք-իրանց յայ-
տարարել նրանց պաշտպան. Որոնք մեծ ընդու-
նակութիւն են ցոլացըել իրանց դատողութիւն-
ների մէջ, երբ խնդիրը վերաբերել է ընկճած-
ների գրութեանը... Կարդացել են, նկատել,
նկարագրել են սրտայոյգ մանրամասնութեամբ
ամեն թշւառութիւն, հմուտ բժշկի մասնագի-
տութեամբ պատկերացըել են վիշտը այնպէս,
որ ես մի ժամանակ գրէթէ սիրահարում էի
նրանց վրայ... Երբ դարմանի, գործելու մա-
սին են ճառել, ոգեսրել են, բորբոքւել, էքստա-
գի հասել, ոսկեայ երազներ, ցնորըներ պատ-
կերացըել... Բայց, երբ այլս ամեն նոր հան-
դիպածի ցոյց են տւել իրանց, երբ շատ կըրկ-
նելուց իրանք էլ զգւել են և երբ մի նիւթա-
կան յաջողութեան մէջ ընկած՝ ստամքսնին
են լցըել—այլս մոռացել են որ թշւառներ
կան, որ իդէալներ գոյութիւն ունին. և մինչեւ
իսկ իրանք, այս, իրանք սկսել են զըկել,

հարստահարել, զրվել, ապա իրանք իրանց արդարացրել...

«Ես խօսել չը գիտիմ, ներեցէք ինձ. շնմ կարողանում արտայայտել թէ ինչպէս այդ բոլոր «խօսքով», իդէալիստները յանկարծ դառնում են ամենափշացած հարստահարողներ և ստամոսքը պարարելուց բացի, ուրիշ ոչինչ իդէալ չեն ունենում...»

«Մեր քաղաքում օրինակը տասնեակներով կայ. ձեզ կարող եմ անուններն իսկ տալ: Այդպիսիները, եթէ խօսեցնէք, դեռ իդէալների մասին կը ճառեն, դեռ թշրւառների համար կը հառաջեն. բայց գործնական կեանքում՝ իրաքանչեւր ըռպէ զրժում են իրանց ասածները... Զգել՝ եմ այլս. այժմ ինձ վրայ տպաւորութիւն չեն թողնում բարձր մտքերի արտասանութիւնները. այժմ այլս ծաղը է շարժում, երբ խօսում են անձնազոհութեան, իդէալների մասին... Այն, այդ խօսքերը ծաղրաշարժ են դարձել այլս...»

«Եւ յիրաւի, ինչ անուն կը տաք այն մարդուն, որ կանանց—մանաւանդ գեղեցիկ կանանց—հասարակութեան մէջ կը լարւի երկու ոտքերի վրայ և տենդային ողբերութեամբ կը ճառի հաւասարութեան մասին, իսկ կեանքի մէջ նա աւելի ճարպիկ լըբութեամբ կը զըկի բոլո-

ըին, կը գոյացնի անարդարութիւններ... Հերիք է մեզ կերակրէք ձեր տեսական ասպետութիւններով. մենք շատ ենք լսել գործնականում ցոյց տւէք, որ դուք բոլորդ կարող էք «սիրել, սիրել և նւիրել, սիրել ու .. «քարանալ»... Ցոյց տւէք մեզ այդ. ճառելն աւելորդ է...»

Եետոյ յանկարծ լոեց և կարմրած, զգաց որ շատ էր առաջ գնացել: Օրիորդներն իսկ զարմացած դիտում էին իրանց լուակեաց, ծածկամիտ և զգուշաւոր համարւած հարսին:

— Ես շատ եմ խօսում.. շարունակեց մեղմութեամբ տիկին Սօնան՝ առանց ոչ ոքի նայելու—Դուք մի կարծէք, պարո՞ն Վահան, որ ձեզ էլ հաշւում եմ այդ խօսողների կարգում: Ես ձեզ դեռ չեմ ճանաչում, գործի մէջ չեմ տեսել... Բայց դուք լաւ էք խօսում. ձեր ծայրայեղ դատողութիւնները իրանց սրութեամբ՝ տպաւորութիւն են թողնում... Բայց ես այս բոլորը ասացի, որովհետեւ այս ըռպէիս գուրս եկանք այն տնից, ուր խաղասեղանի մօտ նըստել են երեք համալսարանականներ, որոնք դեռ մի տարի սրանից առաջ՝ ձեզնից աւելի խիստ խօսքերով դատավիետում էին խաղամոլներին և ոգեսրութեամբ ճառում իդէալների մասին... Այժմ տեսնում էք. — բոլորը ողորմելի մարդիկ են դարձել և նոյն ոգեսրութեամբ ու տենդային

յուզմամբ ողջունում են «քութնու ասին», երբ նա երևան է գալիս...

Եւ լրեց. Պահ մի անշշուկ լոռութիւն տիրեց, որից յետոյ լսւեց մի հեռաւոր խուլ դըղըդիւն:

— Վերին գիւղից մի կառք է գալիս. ասաց փոքր օրիորդը, որ միշտ նայում էր մօտակայ զիւղի՝ բլրակի կողքով անցնող ճանապարհին:

Քիչ յետոյ փոշու նօսը ամպի մէջ երեաց մի կառք, որ հանդարտութեամբ բարձրանում էր:

Լուսնի լոյսի տակ՝ երեսում էին չորս անձեր: Մէկը ձեռքի գոեհիկ նւագարանով ածում էր, երկրորդը երգում, իսկ երկուսը սաստիկ հարբած, շորերը անկարգ, գլխարկնին ծուռ դրած՝ սաստիկ երերում էին կառքի հետ:

— Հարբածներ են. ասաց Վարդուհին: Կառքը հետզհետէ մօտենում էր և հասնում նրանց նստած տեղից 10—15 քայլ հեռաւորութիւնից անցնող ճանապարհի կէտին:

— Վայ,.. բացագանչեց յանկարծ Վարդուհին—Խաչատուրովն է, Սօնա. նայիր, ինչպէս հարբել է. քիչ է մնում կառքից ցած գըլորւի:

Կառքն անցաւ, բերեց բլրակի կողքը և ա-

յագութեամբ գլորւելով՝ անհետացաւ միւս կողմը:

Հինգ ըոսէի չափ երգը և երաժշտութիւնը դեռ լսւում էր հեռուից:

— Միւսներին էլ ճանաշեցի. ասաց փոքր օրիորդը—մէկը Մարգիսովի տղան էր, երկուսն էլ՝ Բաղալովները...

— Դիտեմ. զլուխը շարժեց տիկին Սօնան: Յետոյ, մէկէն, դարձաւ գէպի ուսուցիչը և հարցրեց:

— Դուք էլ ճանաշեցիք:

— Մէկին միայն...

— Մարգիսովին, չէ... Ժպտեց տիկինը—համալսարանական է նա էլ. կարծեմ հէնց միասին էք ուսել... Տեսական ասպետ էր և լաւ տեսակի. Իմ որահը երբեմն թնդում էր նրա ովենուած ձայնից. Ինձ մօտ հաւաքւող օրիորդները գրէթէ բոլորը դրաւել էին նրանով... Յետոյ, մի հարուստ աղջիկ գտաւ, մեծ զործ սկսեց .. և կոմէղիան վերջացել էր... Տեսնում էք ահա թէ ինչ ընկերներ է ընտրել և ինչպէս է նւիրւում գաղափարների...

Ասաց և բարձրածայն ծիծաղելով, ոտքի ելաւ:

Ուսուցիչը լուռ, յուզմամբ ընչացքն էր ոլորում:

—Այժմ տուն գնանք, բաւական է. ասաց
տիկինը և քայլեց:

Ու երբ բլրից իջած՝ մօտենում էին տանը,
նորից երևացին պատշգամի վրայ նստած խա-
ղացողները, և առաջին ձայնը, որ հասաւ ու-
սուցչի ականչին՝ համալսարանական Խըլստա-
ֆորի հնչեղ ազադակն էր,

— Բուլղարու ասն եմ բաց արել, 100 մանէթը իմն է, բանկը ցըիւ տւի, հուռ՝ ուշա՛!...

三

Հնագիրից յետով երկար նստեցին:

Ուսուցիչն այլևս տրամադրութիւն չէր ցոյց
տալիս խօսելու. կարծես յոզնել էր. Եթէ հարց
չէին տալիս՝ լուռ էր. երբ խնդրում էին մի
բան բացատրել, կարճ, թոյլ և միաձայն՝ ար-
տասանում էր մի քանի նախադասութիւն և
լուռում:

Մի տեսակ մտախոհական կնճիռներ ակօ-
սել էին նրա ճակատը և ամեն անգամ, երբ
պատշամից լւում էին խաղացողների ձայները,
այդ ակօսները շատ աւելի խորանում էին:

Խաղացողները ընթրեցին, բայց իսկոյն նստեցին խաղը շարունակելու. և որովհետեւ գիշերը սկսեց խոնաւանալ, սեղանը ներս տարան սրահի:

Տանտէրը, ուսուցիչը և միւսներն անցան
մի ուրիշ սենեակ, ուր դրւած կար մի հին պո-
չաւոր դաշնամուր:

Վարդուհին նստեց նւազելու։ Հին դաշնա-

մուրը, տարիներով նստած ամառանոցային տը-
ների մէջ—անտառային լուռթեան գըկում, ստա-
ցել էր մի այնպիսի մելամաղձոտ, տխուր և խուլ
ձայն, որ միացած օրիորդի՝ զգացմունքով նւա-
գած կտորների սիրտ ճնշող հնչիւններին, ու-
սուցչի վրայ նորօրինակ մի տխրութիւն իջեց-
ըին:

Դաշնամուրի պոչին կոթնած՝ լոելեայն
լսում էր, յակամայից, կարճ պատասխաններ
միայն տալով տանտիրոջ անհատնում հարցերին
այս կամ այն նիւթի վերաբերութեամբ:

Տիկին Սօնան նկատում էր ուսուցչի տը-
մաղրութիւնը և դրա համար էլ լուռ էր: Տան-
տիկինը գնացել էր քնելու, իսկ փոքրիկ օրիոր-
դը, իր մանկական գրաւիչ ժպիտը դէմքին՝ քըոջ
կողքին նստած, գրաւել էր երաժշտութեամբ:

Մի ինչ որ էլէգիա էր նւագւում,—մի
տխուր, մըմնջող, հառաչող էլէգիա, որի մեռ-
նող խազերը աղիողորմ ու խուլ հնչիւններով
դուրս էին սահում հին դաշնամուրի կրծքից և
կնում թըթուալու մեծ ու բարձր սրահի խաւար
խորշերում:

Նւագողը նոյնպէս ընկել էր նւագի տպա-
ւորութեան տակ. գունատ, շուրջերը դող-
դոջուն, ակնարկը տարածութեան մէջ՝ ձեռքելը
մեղմօրէն սահեցնում էր լեզւակների վրայ:
Էլէգիան բղխում էր որպէս մի բուռ ար-

ցունք, որպէս հառաչանքների մի սըտապատառ
արտայայտութիւն...

Տանուտէրը դատարեցուց հարցերը. նա էլ
պահ մի լոեց, յետոյ մեղմիկ, դուրս սահեց սե-
նեակից, թողնելով որ միւս սըահում գոռացող-
ների ձայների կոյտը մի բոպէ ներս մտնէր՝ դի-
սօնանս պատճառելու:

Ուսուցիչը շտագեց դուռը փակելու. էլէ-
գիան վերջանում էր: Վերջին խազը երկար, եր-
կար թըթուաց: Ոչ նւագողը շարժւեց և ոչ լսող-
ները. ու հետեւող ըոպէի լուռթիւնը շատ աւելի
խորութիւն տւաւ խազի թըթուաման, որ մըմուն-
ջով անհետանում էր հեռում: Թւում էր թէ
սենեակը մեծացել էր, անհուն տարածութիւն
ստացել...

—Տիսութ է... ասաց վերջապէս տիկին Սօ-
նան անշարժ և խորունկ ձայնով:

—Այո. մըմնջաց ուսուցիչը—ձեր դաշնա-
մուրը հառաչում է, սիրտ կրծում...
Վարդուհին ելաւ, փակեց դաշնամուրը և
ասաց.

—Յոզնած կը լինէք, պ. Վահան, զնացէք
քնելու:

Ուսուցիչը ոչինչ չը պատասխաննց. լուռ-
թեամբ բարեց բոլորին և գնաց:

Նըան տւել էին մի փոքրիկ սենեակ՝ մեծ
սըահի կողքին: Այստեղ մի գունակ տանում էր

դէպի սենեակի առաջ շինած փոքրիկ պատշգամը, որ նայում էր զիւղի ճանապարհի վրայ:

Մտաւ, մի ըոպէ ակնապիշ նայեց վառւող մոմին, յետոյ յարդեայ թիկնաթոռը հանեց պատշգամի վրայ, նստեց այնտեղ և գլուխը յենած աջ ձեռին, սկսեց դիտել առջեր բացւող տեսարանը:

Պատշգամին բոլորովին կից՝ լիրկ բակն էր, ապա մեծ ճանապարհը՝ ամայի, լոիկ. նրանից յետոյ—հեռուն, անտառի սկզբում, լեռան ստորոտի վրայ մի ամառանոց, որի լուսամուտի մէջ առկայժում էր մշուշից աղօտացած ճրագի լոյսը:

Նրանից վեր՝ փուլում էր դալար, անշշուկ անտառը և մագլցում ու ծածկում կլոր, հարթ և բարձր լեռը, որ լուսընկայի տակ շողշողում էր, թողնելով ծառերի բների տակ մի խոր, անթափանց մթնութիւն:

Ո՞չ մի շշուկ. ո՞չ մի մօտաւոր ձայն. խաղցողները փակել էին լուսամուտները և այժմ այլս չէին գոռգոռում:

Ճըշակայրում խաղաղ գիշեր էր. ամեն ոք քնել էր. շների ձայն խսկ չէր լուսում և հսկայ լեռան անտառը անշարժ, հարթ ու խորհրդաւոր՝ գըաւում էր ամբողջ հօրիզոնը: Ի՞նչ շքեղ լեռ, որպիսի միայնութիւն նրա բարձրութեան վրայ,

որպիսի հանդարտ, անշշուկ վայր հանգչելու և երազելու...

—Ունենալ այնտեղ, բոլորովին բարձր գագաթի վրայ, անտառի խորութեան գրկում թագնւած մի խրճիթ, գնալ թաղւել նրա մէջ, լուսընկային ընկողմանել դալար խոտերի վրայ, ցերէկը հեռու մարդկային ձայներից՝ նստել, երազել և աշխատել: Ապա, երբ կամենար մարդկային ընկերութեան մէջ մտնել, իշնէր ոլորապտոյտ անտառի միջով և շաբաթը մի քանի անգամ գար էլէգիաներ լսելու, գար այտեղ թարմանալու և նորից դէպի վեր, դէպի իր մենարանը, իր լոիկ ու խաղաղ անկիւնը, իր գըքերի ընկերութեան մէջ, իր ներքին աշխարհի, իր երազների հետ...

Եւ տեղի հեռաւորութիւնն ու մենակութիւնը պիտի ստիպէր նրան աւելի սակաւ մտածել ցած իշնելու, մարդկանց մէջ մտնելու. պիտի վարժէր միայնութեան և հեռու մարդկանցից, ինքն իր մէջ ամփոփւած բոլորովին...

Բայց ի՞նչ օգուտ ուրեմն այդ բոլորից. ինչո՞ւ այդպէս խոյս տալ մարդկանցից, ինչո՞ւ առանձնանալ, փախչել, իր ներքին աշխարհով միայն ապրել, ինչո՞ւ երազել մենակ... Ծնել էր դրա համար, ուսել էր գրա համար: Զէ որ ուսումը շեշտել էր նրա մէջ իր նմաններին

ծառայելու, նրանց նւիրւելու և նրանց համար գործելու ծարաւը:

Եւ ահա այժմ, մի տիկնոջ սուր խօսքերը, մի հին դաշնամուրի կուրծքից դուրս նետող էլէպիան՝ կասեցնում էին նրան ու մզում դէպի միայնութիւն, դէպի բուդդայական երազողութիւն և մոռացութիւն...

Ինչու այդքան շուտ յուսաբեկել. դեռ ոչինչ չ'արած, դեռ չ'ենթարկւած այն բոլորին, ինչ որ կրել և ինչից որ մաշւել էին իրանից շատ աւելի զօրեղ մարդիկ—մտածում էր խոյս տալ, դասալիք լինել...

Ո՞չ. այդ անտառը, այդ անշարժութիւնը, այդ մենակութիւնը իր համար չէր։ Նա սիրել է եռուն կեանքի մէջ մտնել, անշարժ չը մնալ. երազել է իր ամբողջ խանդովը նետնել հասարակական ասպարէզը, երազել է և իրան ընդունակ զզացել գործելու...

Այս, գործել, գործել... Այդ բառը որքան անորոշ, որքան անշրջանակ, եթերային բառ էր եղել իր համար։

Գործել—բայց ինչպէս և ինչ, որտեղ և ինչ նպատակով։

Գործել խօսելով, միայն դաս տալով...
Եւ ահա մի տիկին, մի սալօնական տիկին այնպիսի կծու ապտակ հասցըց տեսա-

կանօրէն գործողին, որ նրա մէջ այժմ այլ ամօթ էր գոյանում այսուհետև էլ խօսելու...

Եւ իրաւ, չէ որ ինքը և իր նմանները գործել բառը միշտ փոխանակել են խօսել բառով և գոհացել են միմիայն խօսելով, միմիայն ճառելով. և այդ ճառերը այժմ այնքան գռեհիկ են դարձել, որ ծաղըւում են, զգեցնում...

Խօսել։ Այս, խօսել է շառլատանը, խօսել կարիերիստը, խօսել է մամուլը, խօսում է հարուստ աղջիկ որոնող ուսանողը, խօսում է գինու շշի առաջ նստած արբեցողը, խօսում նաև հարստութեան ետևից ամեն տեսակ միշոցներով վագող երիտասարդը...

Եւ խօսքը դարձել է մի զէնք՝ ստամքսը ճարպացնելու, հարստութիւն դիզելու, փառքի տիրապետելու, գործած անֆրաւութիւններն արդարացնելու, ուկեզօծելու...»

Սմենքը խօսում են և ոչ ոք չի անում այն, ինչ որ սիրում է ոգևորութեամբ խօսել։

Էլ ինչ կար զարմանալու, որ մի սալօնական տիկին հասկացել է՝ թէ խօսողների գործերը չեն համապատասխանում մտքերին. ինչ կար զիրաւորւելու, եթէ այդ կինը և նրա նման շագիրաւորւելու, և զգեցէ ուրիշ շատերն էլ՝ զգել են տերը, և զուցէ ուրիշ շատերն էլ՝ զգել են

«բարձր մտքերից», իդէալի մասին արւած ուռուցիկ ճառերից...

Սկսեց ամօթ զգալ: Ինքն էլ ահա մի բանի տարի էր, որ խօսում էր, ուսուցանում միայն. և ինչե՛ր ասես չէ խօսել: Դեռ նոր էր որ ոգեսորւած՝ ճառում էր իդէալին զոհւելու մասին, ընտրել էր այդ ասպետի զրոյցը, որպէս զի կարողանար խօսել նրանից և մի՞ անգամ ևս ճառել, «իրան ցոյց տալ» ուրիշների, հիացնել տալ և այն էլ կանանց հասարակութեան մէջ...

Ո՞չ, ի՞ հարկէ. չէր ցցւել երկու ռտքի վրայ, ձեռքերով օդը չէր ծեծել ճառելու ժամանակ, բայց ոգեսորւել էր. բայց մի տեսակ սնոտի հպարտութիւն էր զգացել, երբ նկատել էր որ կարող էր բարձր մտքերի վրայ ճառել և հիացումներ հնձել...

Ողքան ողորմելի դրութիւն... խօսքը, իդէալն իսկ զէնք շինել ցուցամոլութեան...

Այդ էր իր ձգտումը, դրա համար էր համալսարան գնացել, դրա համար էր կեանքից զառնութիւններ կուտել և զիտութիւնից պաշար ձեռք բերել...

Ասենք նա ուսուցիչ էր, նաև գրող. ուռուցել էր, գըել էր... եւ միմիայն խօսելով. այդ միևնոյնն է, նա խօսել էր—բերնով կամ գրչով՝ միմիայն խօսել...

—Բուրնու ասը... բանկը իմն է... Լսւեց յանկարծ այդ խուլ ոռնոցը, որ իր բարձրութեամբ դուրս թռաւ սրահի պատերից և եկաւ գառնացած ուսուցչի մտածութիւններին բաղխելու:

—Ա՞ն, բուրնու ասը... մտածեց նա խորին վշտով—այն, ահա թէ ուը կարող էր տանել միմիայն խօսելով և խօսելով բաւականալու գրութիւնը... եւ երբ այլ ևս ես էլ, ամեն նոր հանդիպածի ցոյց կը տամ ինձ, երբ ինքս էլ կը ձանձրանամ իմ կրկնած ուսուցիկ բառերից, երբ ինձ լսողները կը տեսնեն որ խօսող մեքենայ եմ միայն և ուրիշ ոչինչ... ես էլ երեխ պիտի իշնեմ կանաչ սեղանի առաջ և ոռնոցներով ողջունեմ «բուրնու ասի», երեւալը...

Ճնշւած սրտով, դառնացած՝ ուսուցիչը երկու ձեռքերով սեղմեց այրող ճակատն ու մումաց.

—Ի՞նչ անել... ինչպէս անել որ գործեմ, գործեմ...

Յանկարծ, իր գլխի վերեկից, մեղմութեամբ բացւեց երկրորդ յարկի մի լուսամուտը, յետոյ լսւեց մի ձայն, որ կարդում էր.

«... Մենակ չէր ճանապարհ ընկնելիս: Նըահետ շատերը կային, նոյնպէս խելագարներ: Որ նըանք իսկապէս խելագար էին—այդ շու-

տով բոլորի համար պարզ, անվիճելի դարձաւ «Գնալիս նրանք երդւցին չը փերադառնալ իւրայինների մօտ, մինչև անձամբ չը փորձէին և չը կրէին տանջւողների և նեղեանների բոլոր ցաւերը, մինչև չ'ենթարկէին նրանց՝ հալ ու մաշ անող վէրքերին, չ'ընկերանային նրանց կսկիծներին, չզգային նրանց վշտերն ու ակընկալութիւնները» Ու գնացին...»

— Ի՞նչ է այս... սկսեց լսել ուսուցիչը հետաքրքրութեամբ — ինչ է կարդում օրիորդը:

Վերի յարկի սենեակը տիկին Սօնայինն էր: Երևի նրանք նստել էին այնտեղ և Վարդուհին մի զրոյց էր կարդում: Բայց ինչ զրոյց էր. այդ ինչ «խելագարներ» էին, որոնք երդում էին գնալ անձամբ փորձելու տանջւողների կրած վշտերը, անձամբ ընկերանալու նրանց կսկիծներին:

Օրիորդը շարունակում էր: Ուսուցիչը ելաւ, կոթնեց պատշպամի ճաղերին և լարեց լսողութիւնը:

...«Դա մի երկար, փշոտ, խաչակիր ճանապարհ էր — կարդում էր Վարդուհին — նրանք զնում էին գիւղերը, մտնում աղքատութեան մէջ... ուրիշների հետ տանջւում էին...»

Այլ ես չը լսեց: Տղամարդի մի ձայն՝ ընդհատեց ընթերցանութիւնը և ասաց.

— Սօնա, փակիր լուսամուտը, խոնաւութիւն է ներս գալիս: Տանուտէրն էր, նա էլ բարձրացել էր լսելու:

Լուսամուտը դղրդիւնով փակւեց: Ո՞րտեղ էր կարդացել այդ բոլորը: — Խելագարներ, որոնք թողնում էին ամէն հանգստութիւն և գնում էին ուրիշների հետ տանջւելու...

Եհ, յիշեց: Դա մի ոռւս գրող, Զլատովդրատսկու «Խելագար», զրոյցն էր: Ժողովրդին մարգարիտներ տանող խելագարի պատմութիւնը. մի խելագար՝ խելագարների խմբից ելած: Խումբը յոգնել էր առաջ գնալուց. մեծ մասը վերադարձել էր. միւսները կորել էին՝ ինչպէտ լուղորդներ՝ անեզր և անդնդախոր ծովում, իսկ այդ մէկը, հալածւած, ծերացած, սակայն ձեռքը միշտ իր կրծքի վրայ թագցրած ճշմարիտ մարգարիտների վրայ ունենալով հասել էր նըպատակին և մեռել էր ասելով — «Այս մարգարիտներ են, որ հանեցի ժողովրդեան ծովի խորքերից .. դրանք նրա յարութեան և փրկութեան գրաւականներն են... Արժանի եղէք վերադարձնելու դրանց՝ ժողովրդեան իրան՝ վառքի և յաղթանակի պայծառութեամբ»..

Այս, դա «խելագարն» էր, ժողովրդի համար գործող ասպետը, որ չէր կամեցել ան-

Չարժ մնալ և միայն խօսքերով բաւականանալ, որ գնացել էր գործելու, գնացել տանջւելու նրանց հետ, նրանց համար և անձամբ փորձելու նրանց կսկիծները, նրանց վշտերը... նա հալածւել էր, ծաղրել, յոգնել. բայց իդէալին հաւատարիմ մեռել էր «մարգարիտները» ամուր սեղմած սրտի վրայ...

Մէկէն մի լոյս ցոլաց ուսուցչի մտքի մէջ:

Դառնալ «խելագար». Նրա նման, մի ընկեր, իր նման «խելագար» դառնալ կամեցող մի ընկեր գտնել, սիրել և սիրւել նրանից, միմեանց ձեռքը սեղմել ամրապէս և թողնելով հանգստութիւն, հաճոյանալու ձգտումներ, թողնելով ծընող, կին և հանգիստ կեանք—լինել «խելագար»—այդպէս խելագար, բայց միևնոյն ժամանակ կըակ սփռող, գործող ու շարժուն «խելագար»...

Եւ ահա, հետզհետէ պատկերացաւ ուսուցչի առաջ խելագարը իր բոլոր վսեմութեամբ, ուղղաձիգ, հպարտ, աշխոյժ ու խանդով լի, կնճուտ, խորշոմուտ դէմքով... հալումաշ մարմին, յոգնած, փոշոտ, հալածւած լրբերից, ամբոխից քարկոծւած, բայց դէմքը պայծառ, գրեթէ լուսաթաթախ, ձեռքերը ամուր սեղմած կուրծքի վրայ...

Եւ նրա կողքին էլ, ժայռին կոթնած աս-

պետը, որ անդրդւելի ու յամառ, նիզակը ժայռին ցցած՝ մնում է ամրոցի տակ և ոչ ձիւնն ու քամին, ոչ էլ արևն ու խորշակը չեն կարողանում նրան հեռացնել իդէալից. և նա սիրում է, սիրում.. ու մեռնում.. քարանում իր դըշի, իր սիրածի կողքին...

Այս, զառնալ «խելագար», լինել ասպետ և յամառ տոկունութեամբ տանել ժողովրդին ճշմարիտ մարգարիտներ, ապրելով նրա մէջ, ընկերանալով նրա վշտերին, գործելով նրա յարութեան և փրկութեան համար...



բանցիւրց պահան ու վեճարութեա ոչ պահա
 մանց ու և թառ կայսեր և հանու նույն ոչ ու
 պահ ուշ պահանց ու մայս ի ու մայս ու
 նույն ամ և պահարց զանցունք մայս հանու
 ուսք ոչ համապահ անունն առ հանու և
 ... ամքը գնային ոչ ու ի
 տարսու լամի ըստային յամանի ոչ
 մէրդի բորս խանու դնանելուն անուն և
 չն այս խայլաւ պահանցարցան ուժանեն
 այս խոյժնոր միջնոցի այս խայլանցարցա
 ... զանու մամենցին և մամենցու

**«ԳՈՒԽՑՑԵՆՔԵՐԴ» գրախանութում վաճառում
 են հնտեւեալ գրքերը։**

	Բ.	Կ.
Կեանքի տեսարաններ, Քեասիմի	—	50
Երկու եղբայր, Ծարգմ. պ. Պոօշեանի	—	60
Տարաս բուլբա. Ծարգմ. Մ. Աբեղեանի	—	40
Ընտիր պատմուածքներ. Ծարգմ. Վ. Փափաղեանի	—	40
Անահիտ. Ղ. Աղայեանի.	—	30
Կեանքը ծովերի խորքում. Լունկելիչի Ծարգմ.		
Մալխսսեանի.	—	30
Ասի, վէպ. Վ. Փափաղեանի	—	30
Ոյժեր, Ս. Զիլինկարեան և Տ. Ռաշմանեանի.	—	10
Հասարակական թէօրեաներ, Ծարգմ. Մամուելեանի	—	5
Մասոն, Ա. ՔալանԾարի	—	20
Կօշկակար երաժիշտ. թ. ոռու. օր. Ն. Ղալումեանի.	—	5
Ակամայ մարգասպան, Ծարգմ. Տ. Յովհանիսեանի.	—	15
Գոռող Արմաւենին, Ծարգմ. Հ. Ա.	—	5
Գոռող Ազգէն, Ծարգմանութիւն Հ. Ա.	—	5
Կեանքի գծեր, Ս. Նամալեանի.	—	30
Հրէայ Արները. Ծարգմ. օր. Ը. — ն.	—	3
Գետնափորի երեխաները. Վ. Կօրօլենկօի	—	15
Մուֆլու, Ծարգմ. ոռուերենից Յովհ. Օհանեանի	—	10
Երկրի և երկնքի մասին, Վ. Լունկելիչի	—	10
Կեղերիչ (վեպիկ.) Վասի Ի. Ն.—Դանչէնկովի	—	10
Գերմանիայի հայ ուսանողութիւնը. Գ. Մելիք-		
Կարագօղեանի	—	20
Աւագակներ. Ճիլերի	—	15
Ժողովրդի կրթութեան գործը մեղանում. Լ. Մար-		
գսեանի	—	20

Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճ-	
կա-հայաստանի համար. Կարագող . . . — 35	
Անկերոյթ հողագործ, սուսերէնից փոխադրեց Լ.	7
Մելիք-Ծղամեան	30
Հին ցաւ. Լեռն Աղամեանի —	5
Միկթարեան Միաբանութեան 200-ամեայ յորե-	15
լեանի առիթով. Ա. Ահարոննեանի —	20
Կոլումբ, թարգմ. Փիլիպպոս Վարդաննեանի —	7
Մի անգամ աշնանը. թարգ. Ս. Շահումեանի —	25
Մելքոն ազային սթուխան. Յ. Թումանեանցի —	10
Կեղծաւոր դար, թարգմ. Մ. Վ. Մ. —	25
Մեր Խաչօն. Պ. Պոօշեանի —	2
Անպոչ հորթը, թարգմ. Յ. Ստեփանեանի —	2
Ազդանշան, Վ. Մ. Քարշին —	3
Աստծոն թէ մամոնային. Կոմս Լև Տօլստոյի —	5
Մարդուս շատ հող է հարկաւոր. —	5
Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը —	5
Դժոխք. Ճանիկեանի, 2 հատորը —	70
Զրադաշտ, պատկերով. կազմեց Մ. Թամամշեան —	10
Փոքրիկ թմրկահարը. Ամիշիսի —	3
Եասի արկածքներ, թարգմ. Պ. Պոօշեանի —	10
Լերան աղջիկը, Սպիրի փոխադրութիւն —	20
Ռոստոմ և Սալմոն, Բալասեանի —	25
Մակար Չուղըա, Մ. Գօրկիյի —	10
26 տղամարդ և 1 աղջիկ —	5
Մարեր —	5
Ի՞նչ է երջանկութիւն. Լ. Տօլստոյի —	5
Կեանքի գասը. Ա. Ահարոննեանի —	5
Մայրերը —	15
Խենթը, Վ. Փափագեանի —	10
Ճշմարտութիւն, թ. ուսէրենից Ն. Աթանեսեանի —	5
Գրացի ստրուկներ. (պատկեր.) Յ. Եսայեանի —	5
Էմիլ Զօլա —	5
Անիւտա » —	3
Թաթամման գիշեր, Լէօի —	5
Երեք մահ, (պատմուածք) Լ. Ն. Տօլստոյի —	10
Արիւն, Ա. Յ. Ասմանի —	10

չրաման (պատմուածք) Ե. Նինօշվիլի —	5
Խղճով գտասաստան. թ. ուսւ. Ս. Մալխասիանի. —	5
Ուղեցոյց Անի քաղաքի և շրջակայ աւերակաց	20
(ճանապար. համար.) Ա. Մ. —	5
Երկու վէպիկ. I վրէժ Ա հիւանդապահ աղջիկը.	5
թարգմ. Լ. Մ.—Ա. —	15
Մի խոստովանութիւն վեպիկ. Պոլ Բուրժէի —	10
Միհինար չայր Դամիան Վէյսերի կեանքը թ.	10
ուսւ. Ս. Ա. Ե. —	35
Գրիգոր Զանշեան ուսւ. մամուլի էջերում Պ.	50
քահ. Մկրտումեան. —	25
Էվլինա, Գրիգոր. Արծըունի.	7
2ելկաշ և հին ժամանակի պատմութիւններ. թ.	10
Մ. Վարդապետի —	10
Մահմէտ, Եղիչէ Թոփչեանի. —	15
Բժօրնսծն —	5
Հառապտման —	10
Մեսրով մաշտոց —	5
Մեծն Ներսէս —	10
Սահակ Պարթև —	5
Սպահուած աղաւնի. վէպիկ. Նար-Դոս —	30
Տանտիրսա աղջիկը վէպիկ. —	20
Խաչակիր մանուկներ. պատմական վէպիկ. թ.	20
Կ Մարտիրոսից. —	25
2արլս Դարվին թարգմ. Մ. Տէր-Գասպարեան —	25
Պոմաէլի վերջին օրերը, լորդ Լիտտոնի, անգլիա-	1
կան բնազրից թարգմ. Յ. Միրզայեան —	50
Յարութիւն, կոմս Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Տ.	1
Ցովիանիսեանի. —	50
Ֆրօմոն կրտսեր և Ռուլէր աւագ, Դօգէի, հաննիս —	1
Հեղինէ, երկու հատոր. տիկին Մ. Մարիսեանի —	75
Խորտակուած կեանք, Լ. Մանուէլեանի —	1
Յոհ երթաս, Զ. Սենիկվիչ, վէպ Ներսնի Ժամա-	1
նակից, լեհերէնից թարգմ. Ս. Լիսիցիան. —	50
Մարդ եմ, էրէսի, թարգմ. Ս. Մալխասեան —	1
Խնդիրը, Ահարոննեանի —	50
Մելանիա, վէպիկ, Ճիրվանդաղէի —	50
Վէպիկներ, » —	50

Նամուս, Շիրվանղադէի	1 —
Կրակ, »	» 30
Քաօս, Երկու մասից, »	1 50
Էմմա, Վէպ ժամանակակից բարքերից Վ. Փափադ.	1 —
Փարաւոնի աղջիկը Դ. Էրէսսի, թարգմ Գ. Շահ-	— 80
իշխանն ու աղքատը, Մարկ Տուէնի, Բուղաղեանի	1 —
Լինհարդ և Գերգուուղ, Պետալոցցի, Ժողովրդի	
համար, գերմն. թարգմ. Ի. Յարութիւնեան	1 50
Արութիւն և Մանուէլ, Ղ. Աղայեանի, երեք հա.	— 60
Վէքֆիլի երէց, Գոլդսմիթի, թ. Մ. Բուղաղեան	1 —
Անդրանիկ Կոմիչն, Փիրվանօղի, թ. Կ. Մարտ.	— 50
Խաչակիր մասուկներ, թարգմ. Կ. Մարտիրոսեան	— 20
Եւայի աղջկերքը, Հուսէի, ֆրանս. թարգմ. Մ.	1 —
Ողնիներ, թարգմանութիւն Օ. Մ. Ս.	— 8
Զարմանալի որդ, թարգմ. Օր. Ն. Հուլիջանեան	— 10
Խոռողներ, մարդուս մօտ բնակուող կենդանինե-	
րի կեանքից համառօտ նկարագիրներ, թ.	
Լ. Մելիք-Աղամեան	— 50
Երկրի և երկնքի մասին, թարգմ. Կ. Գ.	— 10
Զրոյցներ բնութեան մեծ և ահեղ երեսյթների	
մասին, թարգմ. Մ. Տէր-Անդրէսեան.	— 15
Օդը և կեանքը, թարգմ. Ե. Տէր-Ցակովիրեանց	— 10
Քիմիա, թարգմ. Ա. Մելիք-Ալլահվերդեան	— 40
Երկրաշարժ և հրարիխային լեռներ, թարգմ.	
Լ. Մելիք-Աղամեանց	— 15
Զրոյցներ հողի մասին, Սամուէլ Բալայեանի	— 15
Աներեսյթ հողագործ, թ. Լ. Մելիք-Աղամեան	— 7
Բնախօսութիւն, տարրական դասընթացք, թ. Ք.	
Երզնկեան	— 30
Հանրամաշելի աստղաբաշխութիւն, թ. Տ. Յով.	1 —
» Բնախօսութիւն, թ. Կոստ. Գիւլազ.	1 —
Մեղոններ, Ա. Զիլինկարեանի և Տ. Ռաշմանեանի	— 10
Էլեքտրականութիւն, Ա. Զիլինկարեանի և Տ.	
Ռաշմանեանի	— 15
Ոյժեր, Ա. Զիլինկարեանի և Տ. Ռաշմանեանի	— 10
Մագնիս, թարգմանութիւն	— 12
Կենդանիների աշխարհում, Վ. Լունկելիչի, թ.	
Լ. Էօ	— 30

Առակներ բնական պատմութիւնից. թարգմ.	— 12
Աստղալից երկնքը և երկրագունդը	— 5
Թուշունների աշխանային տեղափոխութիւնը և	
ընի ու ձուի օրս, թարգմ. օր. Օհանեանի	
և Լ. Մ.-Աղամեանի.	— 6
Զուր, 11 պատկերով, Զ. Գրիգորեանցի	— 35
Նախաղիտելիք բուսաբանութեան, պատկերնե-	
րով, Ա. Քիշմիշեանի	— 80
Համառօտ երկրաշափութիւն, Ն. Մ. Սահակիանի	1 80
Տարրական երկրաշափութիւն, թ. Զալալեանց	1 20
Պաստեօր, Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի	— 20
Վազի մշակութիւնը, Կ. Մելիք-Զահնազարեանցի	1 —
Ուղեցոյց գործնական գինեգործութեան, Կ. Մե-	
լիք-Զահնազարեանցի	— 60
Հարլը Դարվին, թարգմ. Ս. Տէր-Դասպարեան.	— 25
Կենդանաբանութիւն և մարդաբանութիւն Հ. Ս.	
Երեմեանի	— 20
Գուեհիկը, Փեղչկոյի, թարգմ. Ա. Միխիթարեան.	— 50
Մահմեդի կեանքը, Իրվինգի, անգլ. թ. Փ. Վ.	1 20
Հորանն ու նշանածը, Գ. Բարխուդարեանի	— 40
Ոսկի շինողներ, Յօնկիէ, թարգմ. Խ. Մարտիրոս.	— 50
Դժբախտ կին, տիկ. Մ. Խատիսիանի.	— 45
Հանրիէտ, Կոպպէի, թարգմ. Լ. Խանազ.	— 35
Միքաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ	— 50
Տանջանքի բովից, Բ. Այվաղեանի	— 30
Հիւսիսի Արծիւը,	— 1 —
Աշոտ Երկաթ, Ա. և Բ. հատ.	— 1 —
Թոյն, Ա. Աթայեանի	— 1 —
Ջինաց, Սարպետի.	— 30
Ինել-Կարապետ, Սարպետի	— 1 —
Քոռ-Եղիկ	— 30
Կոյր երաժիշտ, Կարալենկոյի, թ. Մուշէ վարդ.	— 60
Խոստոմ և Զոհրաբ, թարգմ. Ս. Գիւլգապեան.	— 60
Դատաստանի օրը, Կարալենկոյի թ. Մուշէ վրդ.	— 40
Երզում, Յ. Մալխասեանի	— 40
Միքտ, Էդմոնդ դէ Ամիշխի, ֆրանս. թ. Փ. Վ.	1 —
Հզօր Սամսոն, Օժեշկոյի, թ. Ս. Ահարոնեան.	— 25
Առօրեայ Հովուերգութիւն	— 40

Քօլ Նաւապետ,	Ա.	Դիւմայի,	թ.	Ճերմակեան	—	70
Խորհրդաւոր կղզի,	Ժ.	Վէրնի թ.	Մամուրեան 3 մ.	3	—	
Փէրնանտ,	Ա.	Դիւմայի,	թարգմ.	Տ.	Արփիարեան	1 20
Արաքսիա կամ Վարժուհին,	Սրբուհի	Տիւսարի	1 20			
Մաթիաս Սանտօրփ,	Ժիկ	Վէրնի,	թ.	Իւթիւն.	—	50
Խան-Միրան,	գրեց	Սէլլան	—	—	20	
Փիլիսոփային աշակերտը,	Պօլ.	Առւրժէի,	թարգ.			
Սարաֆի			1 —			
Քամելիազարդ տիկ.	Ա.	Դիւմայի,	թ.	Ասրունի	—	80
Կեանքի տեսարաններ,	Քեասիմի	—	50		
Մի մանկական հոգոյ պատմութիւն,	ոչ	մանուկ-				
ների համար,	թարգմ.	Տ. Վ.	1 —		
Երկունք,	Թ.	Գարու,	Ծերենցի	1 —	
Թորոս Լևոնի	»	Բ.	ապագր.	—	50	
Թէոդորոս Ռշտունի	»	1 —			
Ուրանիա.	աստղագիտական	վէպ,	թ.	Հ.	Ասաք	1 50
Հայրենի հողը,	Հանրի Բօրդօյի,	Հ.	Ասաքելեան.	1 —		
Զընուտ Քուշան,	(Հրէասապահութիւն)	Ջահրիարի	1 —			
Կոտրուած սիրտ,	Յ.	Սոլովեանի	—	40	
Յունոն,	Պ.	Պոօշեանի	1 —		
Կոռուածաղիկ	»	»	»	»	1 30	
Ցեցեր	»	»	»	»	1 —	
Բղդէ	»	»	»	»	1 20	
Սկիզբն երկանց	»	»	»	»	1 20	
Յուշիկներ	»	»	»	»	1 —	
Վէրք Հայաստանի.	գրեց	Խ.	Արովեանց	. . .	1 —	
Ցեց,	Ուիդայի,	թարգմ.	Մ.	Մատինեանի	—	80
Փեսայ օրսողներ,	տիկին	Մ.	Խատիսեանի	—	50	
Հազարից մէկը,	Ն.	Մամիկոնեանի	—	60	
Գարօյի ընտանիքը,	Ս.	Նազարեանի	—	60	
Էլգուջա,	Մոշխուրարիձէ,	թարգմ.	Տ.	Փիրումեան	—	45
Խուն-խոր,	տաճկահայերի	կեանքից,	Յ.	Ղազար.	—	60
Նունուֆար,	ժողովրդական	վէպ,	Մըշքքիանի	—	30	
Տիրան և Արփենիկ	կամ	Սիրոյ	ճարակիք,	գրեց	—	40
Արշ.				—	25
Սիրոյ ուխտաւոր,	իրվինդի,	թ.	Յ.	Խօջամիր	—	

Քիւրդ թէկ,	հտառը	ա.	Մ.	Ջւոտի	· · ·	· · ·	· · ·	20				
Դիւզական խալիփայ,	Արարատեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	50				
Խորտակուած սէր,	Յ.	Եսայեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	30				
Պաղաքանութիւն,	Հ.	Մ.	Քաջունի,	պատկե-	րազարդ	· · ·	· · ·	80				
Ատամունք,	կամ	առաջնորդ	առողջապահութեան	դօքտ.	Իւթիւնեանի	· · ·	· · ·	30				
Ամուսնացած կոնջ ներկայ գրութիւնը,	թարգմ.	Ռ. Յովինջանչանեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	10				
Տէրսիմ,	ճանապարհովութիւն,	Անդրանիկի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	75				
Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ,	Գ.	Ղազարեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	50				
Ղազարեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	15				
Կոլումբոսի օրենքին նոր աշխարհում,	Հ.	Ջահազիփի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	20				
Ջամախուա աղէսար,	ժողովածու	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	50				
Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան,	Փ.	Պալասանեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	50				
Ուղղեցոյց գործնական շերամապահութեան,	Կ.	Մելիք-Ջանազարեանցի	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	40				
Փորձանքների բժկարան,	Բ.	Քոքերի	թարգմ.	Օ-	հանեանի	· · ·	· · ·	20				
Դպրոցական առողջապահութիւն,	թժ.	Վ.	Արծ-	րունի	· · ·	· · ·	· · ·	50				
Մոմազարդ արդի յառաջաղիմութեանը	մէջ,	Հ.	Գրիգորիս	Վ.	Գալէմբարեանի	· · ·	· · ·	25				
Գործնական արուեստախօսութիւն,	Հ.	Եփրեմ	Վ.	Չափանիկ	· · ·	· · ·	· · ·	1 —				
Սարեր բնազիտութեան,	Ղուկայ	Վ.	Տէրաէրեանի	· · ·	· · ·	· · ·	· · ·	2 —				
Դադանիք և արուեստ մողութեան,	Յ.	Գասար-	ճեանի	Վ.	Արմենի	· · ·	· · ·	1 50				
Փորձնական բնազիտութիւն կամ Փիզիքա,	Հ.	Բարսեղ	Վ.	Նուրիճանեանի	· · ·	· · ·	· · ·	2 —				
Տարվա բնականութիւն,	Կամ	առաջակաց	և	մարդու	ծագման	խնդիրը,	Հ.	Երեմեանի	· · ·	· · ·	· · ·	40
Նեղ և խոնաւ բնակարանների մասին,	Հ.	Առա-	քալիսանի	Վ.	Երեմեանի	· · ·	· · ·	10				
Ամուսնութեան զարգացումն,	թարգմ.	Լալայեան	· · ·	· · ·	· · ·	· · ·	· · ·	20				

Առևտրական տնտեսական աշխարհ, թուլիսա-	
նեանի	1 50
Բամբակի մշտկութիւնը, Միրզայեանցի	— 20
Արուեստաբանութիւն կամ շտեմաբան գիտելեաց,	
հայր Քաջունի	
Ամուսնութիւն, թժ. Վ. Արծրունու, պատկերներով	1 50
Մարդը և իր ցեղը, Ալբէտոփ, թարգմ. Նազի-	— 75
կեանի	— 50
Կենդանաբանութիւն, 480 նկարներով, հայր	
Մէնէվիշեանի	
Բուսաբանութիւն, 273 պատկերներով	2 —
Հանքաբանութիւն, 82 » » »	2 —
Մեղուարուծութիւն, նկարներով	1 —
Բնախօսութիւն, թարգմ. Ա. Ագապեանի, պատ-	
կերներով	— 50
Բնական պատմութիւն, պատկերներով, ն. Տա-	
ղաւարեանի	— 70
Մանրէաբանութիւն, պատկերներով	4 —
Սոողջապահութիւն, » » »	1 —
Տարուինականութիւն, պատկերներով, ն. Տա-	
ղաւարեանի	— 30
Ծննդական գործարանք,	— 60
Կենդանական կամ բուժական մագնիսիսմ, թ.	
Փարամազ	
Ծաղկի պատուաստումն, ձեռնարկ, սարկ, Ալ-	— 15
իսպեանի	
Տնային թժշկարան, ակադեմիկ թարխանօվի, 104	— 5
պատկերով	
Գաղտնիք բնութեան, Ա. Հայկունու	1 —
Գործնական խրատներ երեխանների կըթութեան	— 50
համար, թարգմ. Ա. Արամիաննանի	— 30
Կիրակնօրեայ հանգատութիւնը և նրա նշանակու-	
թիւնը, թժ. Զարգարեանցի	— 30
Դաստիարակութիւն և ժառանգութիւն, թարգմ.	
Ս. Մ.	
Առողջապահութիւն և տածումն առաջին ման-	— 60
կութեան	
Կանաց ներկայ դրութեան մասին, թ. Կառեանի	— 40
Կանաց ներկայ դրութեան մասին, թ. Կառեանի	— 15

Աղջիկը, առողջապահական և բարոյական էտիւդ,	
պատկերներով, Վ. Արծրունու	— 60
Հիւանդին բարեկամը, Ս. Յակովիեանի	— 2 —
Դաղտնիք կանաց, Յով. Անուն., թարգմ. 400	
տարուայ ձեռագրից.	— 20
Դիֆերիտ կամ վարակիչ բկացաւ, թժ. Ն. Ցէբ-	
հսահակեանի	— 5
Կեանքը ծովերի խորքում, թարգմ. Ստ. Մալ-	
խասեանի.	— 30
Ասպետ. Վէպ Վ. Փափաղեանի	— 15

Դիմել. — Тифлисъ. Книжный магазинъ
„Гуттенбертъ“ Г. И. Галустянъ.

Գումարով գնողներին զիջումով, Յանկացողներին
վերոյիշեալ զբքերից կարելի է ուղարկել վերադիրով եթէ
կանխավճար ստացւի:

Дозволено Цензурою. 20 Ноября 1903 г. Тифлисъ.



7442

7443

7444

7445

7446

7447

10-72

2013

